VEOLIA Ջուր

**Հավելված №2**
*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 31 ի N379Ն որոշման*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ՄԱՏԱԿԱՐԱՐ- ՈՉ ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)

Հաշվառման քարտ N 6-12-39 (ցանկը կցված է)

Գ. Երևան
(պայմանագրի կնքման վայրը)

«11» 12 2017 թ.

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեի, որը գործում է

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

հիման վրա, մի կողմից, և բաժանորդը՝

______________________________,

(իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող)

[illegible],

(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս [illegible],

(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է [illegible] հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ**՝ հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք**՝ պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.

6) **տեխնիկական պայմաններ**՝ մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջուրը

հաշվառելու, մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել՝

խմելու ջրի և ջրահեռացման

(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,

2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,

3) պահպանել հեռացվող կեղտաջրերի բաղադրությունը՝ համաձայն տեխնիկական պայմանների,

4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,

5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,

6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:

5. Բաժանորդն իրավունք ունի՝

1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ չներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,

2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,

4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

1)ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,

2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,

3)առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթը՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,

8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,

9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝

1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող

տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, պլոմբի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

## 4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:

9. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:

10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

## 5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:

14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային փաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:

16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:



17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ բնակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(լրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

25. ______________________________:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

27. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

29. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

31. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

33. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:



## 11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

35. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

36. Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/h 1150051562015
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՔ N 0001
Գլխավոր տնօրեն Կ. Լորժե

_______________ (ստորագրություն, անունը, ազգանունը)

Կ.Տ.

Կատարող՝ ___ (Ստորագրություն)

___ (Ստորաբաժանման անվանումը)

___ (պաշտոնը և անունը, ազգանունը)

Բաժանորդ՝ ___

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ ___ 130

Ծանուցման հասցեն՝ ___

Էլ. փոստ ___

Հեռախոս 011 56-13-18

ՀՎՀՀ 01533334

Բանկ ___

Հ/h ___

Ղեկավար ___ (ստորագրություն, անունը, ազգանունը)

Կ.Տ. ___ (պաշտոնը, անունը, ազգանունը)

**Հավելված**
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար - ոչ բնակիչ բաժանորդ)
օրինակելի պայմանագրի

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները**

| № | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | [illegible] | | | | | |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/հ 1150035156201[illegible]
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա [illegible]
Գլխավոր տնօրեն [illegible]

_______________
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

Կատարող՝ _______________
(Ստորագրություն)

_______________
(Ստորաբաժանման անվանումը)

_______________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ [illegible]

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝
[illegible] 130

Ծանուցման հասցեն՝
_______________

Էլ. փոստ _______________
Հեռախոս 011 56-13-18
ՀՎՀՀ [illegible]
Բանկ [illegible]
Հ/հ [illegible]
Ղեկավարը (ֆիզիկական անձը)
_______________
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված №2
Հավելված
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար- ոչ բնակիչ բաժանորդ)
օրինակելի պայմանագրի

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ

### 1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները

| № | Քարտի համար | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամաչափ | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 6-12-39 | 6-12-39_1 | WPD | 9367118 | 50 | Բաժ. տարածք | 02.02.2016 |
| 2 | 6-12-34 | 6-12-34_1 | ACTARIS | 451036 | 32 | Բաժ. տարածք | 26.11.2012 |
| 3 | 3-10-13 | 3-10-13_1 | WPD | 9367214 | 50 | Սահմ. կետ | 19.12.2016 |
| 4 | 5-7-13 | 5-7-13_1 | KMEI | 041291 | 32 | Բաժ. տարածք | 24.07.2013 |
| 5 | 6-12-42 | 6-12-42_1 | KMEI | 14438 | 25 | Բաժ. տարածք | 03.11.2009 |
| 6 | 6-12-35 | 6-12-35_1 | KMEI | 205948 | 25 | Սահմ. կետ | 08.10.2010 |
| 7 | 4-4-24 | 4-4-24_1 | KMEI | 100304 | 50 | Սահմ. կետ | 30.03.2012 |
| 8 | 06-0022-48 | 06-0022-48_1 | KMEI | 342062 | 15 | Բաժ. տարածք | 29.08.2016 |
| 9 | 1-10-54 | 1-10-54_1 | KMEI | 03375143 | 20 | Սահմ. կետ | 01.12.2003 |
| 10 | 6-12-44 | 6-12-44_1 | ACTARIS | 006744 | 40 | Բաժ. տարածք | 26.08.2015 |
| 11 | 1-12-54 | 1-12-54_1 | LXSG | 0001523 | 20 | Բաժ. տարածք | 25.09.2015 |
| 12 | 1-12-54 | 1-12-54_2 | AQUADIS | 342151 | 15 | Բաժ. տարածք | 18.02.2016 |
| 13 | 1-10-65 | 1-10-65_1 | KMEI | 082745 | 20 | Սահմ. կետ | 21.10.2013 |
| 14 | 3-12-29 | 3-12-29_1 | KMEI | 216027 | 40 | Սահմ. կետ | 13.08.2016 |
| 15 | 3-12-29 | 3-12-29_2 | GMDX / B METERS | 783578 | 15 | Սահմ. կետ | 21.05.2013 |
| 16 | 3-12-29 | 3-12-29_3 | CBK | 1015095415706 | 15 | Բաժ. տարածք | 05.04.2016 |
| 17 | 06-0185-1 | 06-0185-1_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 342069 | 15 | Սահմ. կետ | 26.04.2016 |
| 18 | 06-0185-1 | 06-0185-1_2 | KMEI | 012930 | 50 | Սահմ. կետ | 31.07.2013 |
| 19 | 6-12-45 | 6-12-45_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 342045 | 15 | Բաժ. տարածք | 01.09.2015 |
| 20 | 2-12-74 | 2-12-74_1 | LXSG | 001192 | 20 | Բաժ. տարածք | 26.06.2012 |
| 21 | 2-12-74 | 2-12-74_2 | CD96TAR-G | 7200231 | 15 | Բաժ. տարածք | 05.04.2014 |
| 22 | 2-12-74 | 2-12-74_3 | CD96TAR-G | 7200350 | 15 | Բաժ. տարածք | 05.04.2014 |
| 23 | 7-12-43 | 7-12-43_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 342147 | 15 | Բաժ. տարածք | 11.03.2016 |
| 24 | 7-12-43 | 7-12-43_2 | AQUADIS | 342150 | 15 | Բաժ. տարածք | 11.03.2016 |
| 25 | 7-12-43 | 7-12-43_3 | KMEI | 028899 | 15 | Բաժ. տարածք | 12.03.2016 |
| 26 | 7-12-2061 | 7-12-2061_1 | CXB | 0001632 | 20 | Բաժ. տարածք | 06.10.2015 |
| 27 | 7-12-2061 | 7-12-2061_2 | CBK | 1015097383706 | 15 | Բաժ. տարածք | 13.04.2016 |
| 28 | 9-12-53 | 9-12-53_1 | KMEI | 451242 | 25 | Սահմ. կետ | 19.11.2015 |
| 29 | 9-12-53 | 9-12-53_4 | WPH / ZENNER | 01747214 | 15 | Սահմ. կետ | 01.02.2015 |
| 30 | 9-10-47 | 9-10-47_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 451127 | 25 | Սահմ. կետ | 16.06.2015 |
| 31 | 9-10-47 | 9-10-47_2 | CD96TAR-G | 7199051 | 15 | Բաժ. տարածք | 26.06.2013 |
| 32 | 9-10-47 | 9-10-47_3 | GSD / B METERS | 948578 | 20 | Բաժ. տարածք | 01.05.2016 |
| 33 | 4-10-27 | 4-10-27_1 | AQUADIS | 451091 | 25 | Բաժ. տարածք | 31.03.2016 |
| 34 | 4-10-27 | 4-10-27_2 | CD96TAR-G | 7198826 | 15 | Սահմ. կետ | 24.07.2013 |
| 35 | 4-10-2700 | 4-10-2700_1 | GSD / ETK / ARAZEN | 11218 | 15 | Բաժ. տարածք | 21.01.2009 |
| 36 | 22-1-7 | 22-1-7_1 | LXSG | 06608 | 15 | Բաժ. տարածք | 01.12.2014 |
| 37 | 7-12-93 | 7-12-93_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 451142 | 25 | Սահմ. կետ | 17.06.2015 |
| 38 | 7-12-93 | 7-12-93_2 | AQUADIS | 342129 | 15 | Սահմ. կետ | 08.12.2016 |
| 39 | 1-12-19 | 1-12-19_1 | 1 ԳՈՐԾ. ՍՈՎՈՐԱԿԱՆ Ջ/փ | 006770 | 40 | Բաժ. տարածք | 26.09.2015 |
| 40 | 1-12-109 | 1-12-109_1 | KMEI | 119752 | 20 | Բաժ. տարածք | 15.01.2016 |
| 41 | 05-10-32 | 05-10-32_1 | ACTARIS | 451181 | 25 | Սահմ. կետ | 08.08.2014 |
| 42 | 07-05-9 | 07-05-9_1 | KMEI | 204281 | 25 | Բաժ. տարածք | 03.11.2006 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 0-47 | 5-10-47_1 | WDEK30 / B METERS | 5043 | 50 | Բաժ. տարածք | 15.12.1998 |
| | 133-76 | 06-1133-76_1 | KMEI | 005878 | 20 | Սահմ. կետ | 01.04.2013 |
| | 7-15-27 | 7-15-27_1 | AQUADIS | 9366312 | 50 | Սահմ. կետ | 27.04.2016 |
| 46 | 6-15-28 | 6-15-28_1 | ACTARIS | 451038 | 25 | Բաժ. տարածք | 28.07.2015 |
| 47 | 06-0142-130 | 06-0142-130_1 | KMEI | 069688 | 32 | Սահմ. կետ | 14.06.2013 |
| 48 | 06-0142-130 | 06-0142-130_2 | LXSG | 00402 | 20 | Բաժ. տարածք | 20.01.2016 |
| 49 | 8-10-19 | 8-10-19_1 | ACTARIS | 451265 | 25 | Սահմ. կետ | 25.04.2015 |
| 50 | Նոր բաժ. | | | | | | |
| 51 | 50335522 | 50335522_1 | KMEI | 004312 | 25 | Բաժ. տարածք | 02.07.2008 |
| 52 | 67138872 | 67150220 | B-METERS | 5081 | | | 01.02.2014 |
| 53 | 67134846 | 67142065 | DNN | 0172355606 | | | 01.06.2008 |
| 54 | 67134846 | 67147634 | MINOL | 067679170 | | | 01.06.2012 |
| 55 | 117441083 | 117456142 | | 205931 | | | 01.11.2003 |
| 56 | 100667210 | 100671376 | METERS | 105298 | | | 02.11.2014 |
| 57 | 83886417 | 83886604 | MINOMESS | 4122162 | | | 01.01.2004 |
| 58 | 33562604 | 33568007 | B-METERS | 204278 | | | 01.09.2002 |
| 59 | 587202738 | 587208610 | MINOL | 067730165 | | | 01.04.2010 |
| 60 | 637535622 | 637536870 | DMTBEKC | 195992-99 | | | 01.03.2004 |
| 61 | 352336216 | 352350890 | LXSC | 0626394 | | | 25.08.2005 |
| 62 | 318767226 | 318767310 | LXSG | 504 | | | 20.03.2013 |
| 63 | 335544324 | 335544326 | RAK | 305016 | | | 01.02.2002 |
| 64 | 352336221 | 352350899 | SGV | 204279 | | | 01.06.2002 |
| 65 | 369100328 | 369101605 | KMEI | H0511658 | | | 01.01.2009 |
| 66 | 318787819 | 318814342 | SUPER | H119236 | | | 01.05.2015 |
| 67 | 218113183 | 218193644 | | 205958 | | | 01.05.2010 |
| 68 | 218103913 | 218193450 | B-METERS | 462942-07 | | | 19.01.2015 |
| 69 | 218111074 | 218193448 | B-METERS | 205960 | 20 | | 01.11.2015 |
| 70 | 268444975 | 268451430 | LXSC | 017320 | | | 02.05.2015 |
| 71 | 285219715 | 285225241 | CBK | 578300 | | | 01.12.2009 |
| 72 | 251659159 | 251660075 | SVK | 0958 | | | 25.04.2005 |
| 73 | 234882053 | 234882057 | DNN | 205946 | | | 02.04.2009 |
| 74 | 218104663 | 218194071 | B-METERS | 205943 | | | 02.07.2015 |
| 75 | 218148983 | 218199684 | LXSG | 0006771 | | | 01.04.2010 |
| 76 | 402653411 | 402653638 | GSD | 598465 | | | 02.06.2014 |
| 77 | 402653411 | 402783908 | GSD | 643694 | | | 02.12.2014 |
| 78 | 402720624 | 402785642 | KMEI | Առանց համար | | | 02.08.2013 |
| 79 | 402720624 | 402809014 | CBK | 1015096800907 | | | 01.04.2016 |
| 80 | 402720657 | 402785751 | CBK | 10166023446601 | | | 01.10.2016 |
| 81 | 402720657 | 402806999 | ARAZEN | 7265581 | | | 02.06.2016 |
| 82 | 402720657 | 402807000 | GSD | 643701 | | | 01.11.2014 |
| 83 | 402706822 | 402755644 | GMOX-50 | 5095 | | | 01.08.2003 |
| 84 | 402716224 | 402774054 | B-METERS | 2059682 | | | 02.02.2013 |
| 85 | 402722453 | 402790429 | СМДКС | 205944 | | | 01.09.2008 |
| 86 | 419430469 | 419430508 | METERS | 205962 | | | 01.11.2012 |
| 87 | 704643076 | 704645781 | GHDX-25 | 205942 | | | 01.02.2009 |
| 88 | 402729934 | 402808130 | GSD | 644675 | | | 01.08.2015 |
| 89 | 402720625 | 402785644 | LXSG | 0627727 | | | 01.05.2006 |
| 90 | 452995564 | 453005668 | B-METERS | 1 | | | 31.05.2008 |
| 91 | 469762082 | 469762093 | B-METERS | 204286 | | | 02.05.2015 |
| 92 | 469762082 | 469769974 | GMOX-25 | 205947 | | | 01.10.2011 |
| 93 | 503316487 | 503316491 | LXSG | 00267 | | | 02.01.2010 |
| 94 | 486545648 | 486550134 | LXSC-13/20/ D3 | 58568 | | | 01.08.2005 |
| 95 | 453000462 | 453018046 | BAYLAN | 069059 | | | 01.09.2015 |
| 96 | 620759750 | 620762146 | | 05945 | | | 01.03.2004 |
| 97 | 620759751 | 620762148 | KMEI | 011660 | | | 01.04.2012 |
| 98 | 687867415 | 687868838 | LXSC | 096559 | | | 02.11.2014 |
| 99 | 436209833 | 436212030 | B-METERS | 205969 | | | 02.10.2013 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 100 | 167772215 | 167772266 | B-METERS | 773109 | | | 02.03.2015 |
| 101 | 184549405 | 184549425 | MINOL | 067650514 | | | 02.03.2011 |
| 102 | 603980930 | 603982412 | DN-15 | 3533 | 15 | | 02.08.2016 |
| 103 | 167783391 | 167788289 | BAYLAN | 071319 | 15 | | 02.09.2016 |
| 104 | 201330607 | 201332181 | QSD-15 | 862336 | | | 02.09.2015 |
| 105 | 520099370 | 520104923 | PV-16 | 204273 | | | 01.02.2002 |
| 106 | 536873179 | 536875476 | BAYLAN | 063946 | | | 02.08.2015 |
| 107 | 301991752 | 301993613 | BAYLAN | 063404 | 15 | | 02.01.2016 |
| 108 | 553648150 | 553648170 | SENSUS | 0175633206 | | | 07.09.2007 |
| 109 | 520099369 | 520104921 | LXSG | 1444 | | | 02.05.2015 |
| 110 | 1023411317 | 1023412434 | GSD D=15 | 0203004953 | | | 19.12.2005 |
| 111 | 1023411318 | 1023442473 | GSD | 842445 | | | 01.03.2014 |
| 112 | 1023411318 | 1023442475 | GSD | 842444 | | | 01.03.2014 |
| 113 | 1023411491 | 1023442471 | METERS | 8016 | | | 02.06.2015 |
| 114 | 1023411491 | 1023443185 | METERS | 0499 | | | 02.06.2015 |
| 115 | 1023411579 | 1023442470 | BAYLAN | 068027 | | | 02.01.2016 |
| 116 | 150994950 | 150994954 | METERS | 2014010768 | | | 02.11.2014 |

Մատակարար՝ «ՎեոլիաՋուր» ՓԲԸ
Գտնվելուվայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
Էլ. փոստ՝ office@veoliadjur.am
Հ/հ 1150035 1562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն

______________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող ______________
(Ստորագրություն)
______________
(Ստորաբաժանման անվանումը)
______________
(պաշտոնը, անուն, ազգանուն)

Բաժանորդ՝ ______________

Գտնվելու վայրը՝ ______________ 130

Ծանուցման հասցեն՝
______________

Էլ. փոստ ______________

Հեռախոս 011 56-13-18
ՀՎՀՀ 01533334

Բանկ ______________

Հ/հ 9000 1115 9044

Ղեկավար (ֆիզիկական անձ)
______________
(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.
(առկայության դեպքում)

# Հավելված

## Միասնական պայմանագրում ներառված բաժանորդների ցանկ

| Հ/Հ | արտի համար | Ստորաբաժանման անվանումը | Հասցե | Ծառայության տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 6-12-39 | ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ | ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ 130 | ՋԿ |
| 2 | 6-12-34 | ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ /2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔ/ | ՄՈՍԿՈՎՅԱՆ 1 | ՋԿ |
| 3 | 3-10-13 | ՀՀ ՈՍՏ. ՏՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱԶԱ | ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂ. 77Ա | ՋԿ |
| 4 | 5-7-13 | ՀՀ ՈՍՏ. ՏՎ ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | ԻՍԱԿՈՎԻ 7 | ՋԿ |
| 5 | 6-12-42 | ՀՀ ՈՍՏ. ՏՎ ՏՊԱՐԱՆ | ԽԱՆՋՅԱՆԻ 51 | ՋԿ |
| 6 | 6-12-35 | ՀՀ ՈՍՏ. ՆԱՎ | ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ 57 | ՋԿ |
| 7 | 4-4-24 | ՀՀ ՈՍՏ. 25 ՀՐՇԵՋ ՄԱՍ | ԱԴՈՆՑԻ 22 | ՋԿ |
| 8 | 06-0022-48 | ՀՀ ՈՍՏ. ԻՆՏԵՐՊՈԼԻ ԱԿԲ | Զ.ՍԱՐԿԱՎԱԳԻ 48 | ՋԿ |
| 9 | 1-10-54 | ՀՀ ՈՍՏ. ԿՏՏՎ ՌԱԴԻՈԿԵՆՏՐՈՆ | ՆՈՒԲԱՐԱՇԵՆ 1 Փ. 13 Ա | ՋԿ |
| 10 | 6-12-44 | ՀՀ ՈՍՏ. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | ԽԱՆՋՅԱՆԻ 51 | ՋԿ |
| 11 | 1-12-54 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՈԲ | ԽՈՐԵՆԱՑՈՒ 162 | ՋԿ |
| 12 | 1-10-65 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՈԲ-Ք | ՆՈՒԲԱՐԱՇԵՆ 6 Փ. 0 | ՋԿ |
| 13 | 3-12-29 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՇԵՆԳԱՎԻԹԻ ՈԲ | Գ.ՆԺԴԵՀԻ 27 | ՋԿ |
| 14 | 06-0185-1 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈԲ | ՉԱՐԵՆՑԻ 2 | ՋԿ |
| 15 | 6-12-45 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՄԱՐԱՇԻ ՈԲ-Ք | ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ 11 | ՋԿ |
| 16 | 2-12-74 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈԲ ՀԵՆԱԿԵՏ | ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ 41 | ՋԿ |
| 17 | 7-12-43 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՆՈՐ - ՆՈՐՔԻ ՈԲ | 1 ԶԱՆԳՎԱԾ 60Շ. | ՋԿ |
| 18 | 7-12-2061 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԱՎԱՆԻ ՈԲ-Ք | ԱՎԱՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԹԱՂ. 2 | ՋԿ |
| 19 | 9-12-53 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՄԱՇՏՈՑԻ ՈԲ | ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ 10/1 | ՋԿ |
| 20 | Նոր բաժ. | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԴԱՎԻԹԱՇԵԻ ՈԲ-Ք | ԴԱՎԹԱՇԵՆ 4 ԹԱՂ., 31/2 | ՋԿ |
| 21 | 9-10-47 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՄԱԼԱԹԻԱՅԻ ՈԲ | Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ 22 | ՋԿ |
| 22 | 4-10-27 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԱՐԱԲԿԻՐԻ ՈԲ | ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ 1 | ՋԿ |
| 23 | 4-10-2700 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԱՐԱԲԿԻՐԻ ՈԲ ՀԵՆԱԿԵՏ | ԿՈՄԻՏԱՍԻ 35/3 | ՋԿ |
| 24 | 22-1-7 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ԱՐԱԲԿԻՐԻ ՈԲ ՀԵՆԱԿԵՏ | ՀԱԿՈԲՅԱՆԻ 11/3 0 | ՋԿ |
| 25 | 7-12-93 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՔԱՆԱՔԵՌ - ԶԵՅԹՈՒՆԻ ՈԲ | ԱՀԱՐՈՆՅԱՆԻ 3 | ՋԿ |
| 26 | 1-12-19 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՊՊԾ ԳՈՒՆԴ | ԽՈՐԵՆԱՑՈՒ 158 | ՋԿ |
| 27 | 1-12-109 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՋՊՎ | ԽՈՐԵՆԱՑՈՒ 162 | ՋԿ |
| 28 | 05-10-32 | ՀՀ ՈՍՏ. երՔՎ ՈՒՂԵԿՑՈՂ ԳՈՒՄԱՐՏԱԿ | ԱՐԴՈՒԹՅԱՆԻ 10 | ՋԿ |
| 29 | 07-05-9 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ԻՍԱԿՈՎԻ 9 | ՋԿ |
| 30 | 5-10-47 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ 1-ԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿ | ԹԱՅԻՐՈՎԻ 14 | ՋԿ |
| 31 | 06-1133-76 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԵՐԵՎԱՆԻ ՀՔԲ | ԳԱԶԵԳՈՐԾՆԵՐ 76 | ՋԿ |
| 32 | 7-15-27 | ՀՀ ՈՍՏ. ԲՎ ՀՈՍՊԻՏԱԼ | ԱՎԱՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ 14 | ՋԿ |
| 33 | 6-15-28 | ՀՀ ՈՍՏ. ԲՎ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ | ԱԲՈՎՅԱՆԻ 54 | ՋԿ |
| 34 | 06-0142-130 | ՀՀ ՈՍՏ. ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | ԴԱՎԹԱՇԵՆ 4 ԹԱՂ. | ՋԿ |
| 35 | 8-10-19 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՇՏԱՐԱԿ | Ջ |
| 36 | 50335522 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄՎ ՆԱԻՐԻԻ ՈԲ | Ք.ԵՂՎԱՐԴ ՇԻՐԱԿԻ 2 | ՋԿ |
| 37 | 67138872 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՐՏԱՇԱՏ ՕԳՈՍՏՈՍԻ 23 122 | ՋԿ |
| 38 | 67134846 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱՐԱՏԻ ՄՎ ԱՐՏԱՇԱՏԻ ՈԲ | Ք.ԱՐՏԱՇԱՏ ՇԱՀՈՒՄՅԱՆ | ՋԿ |
| 39 | 117441083 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱՐԱՏԻ ՄՎ ԱՐԱՐԱՏԻ ՈԲ /ՎԵԴԻ/ | Ք.ՎԵԴԻ Ե. ՉԱՐԵՆՑ | ՋԿ |
| 40 | 100667210 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱՐԱՏԻ ՄՎ ԱՐԱՐԱՏԻ ՈԲ-Ք | Ք.ԱՐԱՐԱՏ Ե.ՉԱՐԵՆՑ 1 | ՋԿ |
| 41 | 83886417 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ՄԱՍԻՍԻ ՀՔԲ | Ք.ՄԱՍԻՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 30 | ՋԿ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 42 | 33562604 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ ԱՇՏԱՐԱԿԻ ՈԲ | Ք.ԱՇՏԱՐԱԿ ԷՋՄ. ԽՃՈՒՂԻ | ՁԿ |
| 43 | 587202738 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ ԱՊԱՐԱՆԻ ՈԲ | Ք.ԱՊԱՐԱՆ ԳԱՅԻ 9 | ՁԿ |
| 44 | 637535622 | ՀՀ ՈՍՏ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՎ ԹԱԼԻՆԻ ՈԲ | Ք.ԹԱԼԻՆ ԳՈՐԿՈՒ 14 | ՁԿ |
| 45 | 352336216 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ՀՐԱԶԴԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՏԱ | ՁԿ |
| 46 | 318767226 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄՎ ԿՈՏԱՅՔԻ ՈԲ | Ք.ԱԲՈՎՅԱՆ ԶՈՐ.ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂ. | ՁԿ |
| 47 | 335544324 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄՎ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՈԲ | Ք.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ 1 | ՁԿ |
| 48 | 352336221 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄՎ ՀՐԱԶԴԱՆԻ ՈԲ | Ք.ՀՐԱԶԴԱՆ | ՁԿ |
| 49 | 369100328 | ՀՀ ՈՍՏ. ԿՈՏԱՅՔԻ ՄՎ ԾԱՂԿԱԶՈՐԻ ՈԲ-Ք | Ք.ԾԱՂԿԱԶՈՐ | ՁԿ |
| 50 | 318787819 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԿՈՏԱՅՔԻ ՀՔԲ | Գ.ՆՈՐ ԳՅՈՒՂ 1 7/1 | ՁԿ |
| 51 | 218113183 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ՎԱՆԱՁՈՐ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ 1\1 | ՁԿ |
| 52 | 218103913 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ՏԱՐՈՆԻ ՈԲ | Ք.ՎԱՆԱՁՈՐ ԳՈՇԻ 3 | ՁԿ |
| 53 | 218111074 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ԲԱԶՈՒՄԻ ՈԲ | Ք.ՎԱՆԱՁՈՐ ՌՈՒՍԹԱՎԻ 1 | ՁԿ |
| 54 | 268444975 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՈԲ | Ք.ԱԼԱՎԵՐԴԻ 3 | ՁԿ |
| 55 | 285219715 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՈԲ | Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԻԼԻՈՆԻ 37 | ՁԿ |
| 56 | 251659159 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ՍՊԻՏԱԿԻ ՈԲ | Ք.ՍՊԻՏԱԿ ԱԼ.ՄԱՆՈՒԿՅԱՆ-1 | ՁԿ |
| 57 | 234882053 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ՏԱՇԻՐԻ ՈԲ | Ք.ՏԱՇԻՐ ՊՈՒՇԿԻՆԻ 100 | ՁԿ |
| 58 | 218104663 | ՀՀ ՈՍՏ. ԼՈՌՈՒ ՄՎ ԳՈՒԳԱՐՔԻ ՈԲ | Գ.ԳՈՒԳԱՐՔ 1 8 | ՁԿ |
| 59 | 218148983 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ՎԱՆԱՁՈՐԻ ՎԱՇՏ | Ք.ՎԱՆԱՁՈՐ ԼՈՌՎԱ ԽՃ. 1 | ՁԿ |
| 60 | 402653411 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԳՅՈՒՄՐԻ ՊՌՈՇՅԱՆ/Ք.ԵՐԵՒԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 130/ 58 | ՁԿ |
| 61 | 402720624 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ՄՈՒՇԻ ՈԲ | Ք.ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿԱՑԻ 17 | ՁԿ |
| 62 | 402720657 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԿՈՒՄԱՅՐԻԻ ՈԲ | Ք.ԳՅՈՒՄՐԻ ԿԱՅԱՐԱՆԱՄԵՐՁ ՀՐԱՊԱՐԱԿ 2 | ՁԿ |
| 63 | 402706822 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԱՄԱՍԻԱՅԻ ՈԲ | Գ.ԱՄԱՍԻԱ | ՁԿ |
| 64 | 402716224 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԱՆԻԻ ՈԲ | Ք.ՄԱՐԱԼԻԿ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ | ՁԿ |
| 65 | 402722453 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՈԲ | Գ.ԱԽՈՒՐՅԱՆ Գ.ԱԽՈՒՐՅԱՆ | ՁԿ |
| 66 | 419430469 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԱՐԹԻԿԻ ՈԲ | Ք.ԱՐԹԻԿ ԳՈՐԿՈՒ 1 | ՁԿ |
| 67 | 704643076 | ՀՀ ՈՍՏ. ՇԻՐԱԿԻ ՄՎ ԱՇՈՑՔԻ ՈԲ | Գ.ԱՇՈՑՔ | ՁԿ |
| 68 | 402729934 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԳՅՈՒՄՐԻԻ ՀՔԲ | Ք.ԳՅՈՒՄՐԻ ԼԻՍԻՆՅԱՆ 1 | ՁԿ |
| 69 | 402720625 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԳՅՈՒՄՐԻԻ ՎԱՇՏ | Ք.ԳՅՈՒՄՐԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ | ՁԿ |
| 70 | 452995563 | ՀՀ ՈՍՏ. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԿԱՊԱՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1Ա | ՁԿ |
| 71 | 452995564 | ՀՀ ՈՍՏ. ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ ԿԱՊԱՆԻ ՈԲ | Ք.ԿԱՊԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ 4 | ՁԿ |
| 72 | 469762082 | ՀՀ ՈՍՏ. ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ ՄԵՂՐԻԻ ՈԲ | Ք.ՄԵՂՐԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ 1 | ՁԿ |
| 73 | 503316487 | ՀՀ ՈՍՏ. ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ ՍԻՍԻԱՆԻ ՈԲ | Ք.ՍԻՍԻԱՆ Գ. ՆԺԴԵՀԻ 6 | ՁԿ |
| 74 | 486545648 | ՀՀ ՈՍՏ. ՍՅՈՒՆԻՔԻ ՄՎ ԳՈՐԻՍԻ ՈԲ | Ք.ԳՈՐԻՍ ՆԱՐԵԿԱՑԻ 3 | ՁԿ |
| 75 | 453000462 | ՀՀ ՈՍՏ. ՃՈ ԿԱՊԱՆԻ ՀՔԲ | Ք.ԿԱՊԱՆ Գ- ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ 128Բ | ՁԿ |
| 76 | 620759750 | ՀՀ ՈՍՏ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԵՂԵԳՆԱՁՈՐ ՄԻԿՈՅԱՆ | ՁԿ |
| 77 | 620759751 | ՀՀ ՈՍՏ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՈԲ | Ք.ԵՂԵԳՆԱՁՈՐ ՄԻԿՈՅԱՆ 18 | ՁԿ |
| 78 | 687867415 | ՀՀ ՈՍՏ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ ՎԱՅՔԻ ՈԲ | Ք.ՎԱՅՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 2 | ՁԿ |
| 79 | 436209833 | ՀՀ ՈՍՏ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՈԲ | Ք.ՋԵՐՄՈՒԿ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ | ՁԿ |
| 80 | 167772215 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԳԱՎԱՌ ՕԳՈՍՏՈՍԻ 23 85 | ՁԿ |
| 81 | 184549405 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ ՍԵՎԱՆԻ ՈԲ | Ք.ՍԵՒԱՆ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ 8 | ՁԿ |
| 82 | 603980930 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՈԲ | Ք.ՃԱՄԲԱՐԱԿ Գ. ՆԺԴԵՀԻ | ՁԿ |
| 83 | 167783391 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ ԳԱՎԱՌԻ ՈԲ | Ք.ԳԱՎԱՌ ՍԱՅԱԴՅԱՆ 18 | ՁԿ |
| 84 | 654311428 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՈԲ | Ք.ՄԱՐՏՈՒՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 7 | Կ |
| 85 | 201330607 | ՀՀ ՈՍՏ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՎ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՈԲ | Ք.ՎԱՐԴԵՆԻՍ Լ.ԱԶԳԱԼԴՅԱՆ 3 | ՁԿ |
| 86 | 520099370 | ՀՀ ՈՍՏ. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԻՋԵՒԱՆ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ 6 | ՁԿ |
| 87 | 536873179 | ՀՀ ՈՍՏ. ՏԱՎՈՒՇԻ ՄՎ ՏԱՎՈՒՇԻ ՈԲ /ԲԵՐԴ/ | Ք.ԲԵՐԴ ԼԵՒՈՆ ԲԵԿԻ 12 | ՁԿ |
| 88 | 301991752 | ՀՀ ՈՍՏ. ՏԱՎՈՒՇԻ ՄՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՈԲ | Ք.ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ 4 | ՁԿ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 89 | 553648150 | ՀՀ ՈՍՏ. ՏԱՎՈՒՇԻ ՄՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՈԲ | Ք.ԴԻԼԻՋԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 57 | ՋԿ |
| 90 | 520099369 | ՀՀ ՈՍՏ. ՏԱՎՈՒՇԻ ՄՎ ԻՋԵՎԱՆԻ ՈԲ | Ք.ԻՋԵՒԱՆ ԵՐԵՒԱՆՅԱՆ 13 | ՋԿ |
| 91 | 1023411317 | ՀՀ ՈՍՏ. ԱՐՄԱՎԻՐԻՄ ԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ք.ԱՐՄԱՎԻՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 22 | ՋԿ |
| 92 | 1023411318 | ՀՀ ՈՍՏ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՈԲ | Ք.ԱՐՄԱՎԻՐ ՋԻՎԱՆՈՒ 3 | ՋԿ |
| 93 | 1023411491 | ՀՀ ՈՍՏ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ ՄԵԾԱՄՈՐԻ ՈԲ | Ք.ՄԵԾԱՄՈՐ 5–ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 48 | ՋԿ |
| 94 | 1023411579 | ՀՀ ՈՍՏ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՈԲ | Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ (ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՇՐՋ.) ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 1\1 | Ջ |
| 95 | 150994950 | ՀՀ ՈՍՏ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՈԲ | Ք.ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱՄՈ 15 | ՋԿ |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան,Աբովյան 66ա

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Հ/Հ 11500351562015

ՀՎՀՀ 02655115

Գլխավոր տնօրեն----------------------------------------Կ. Լըֆե

«---------»------------------------------2017թ

Բաժանորդ ՀՀ Ոստիկանություն

Գտնվելու վայրը՝ Նալբանդյան 130

ՀՀ Ֆին. նախ.

Հ/Հ 9000 11159044

ՀՎՀՀ 01533334

----------------------------------------

«---------»------------------------------2017թ